ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

12 փետրվարի 2025 թվականի քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետեւյալ կազմով՝

նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի, զեկուցող դատավոր՝ Ն.Վ. Պավլովայի, դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրահիմովայի, Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Ա.Ա. Զաբարայի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաեւի, Ա.Գ. Թունյանի,

քարտուղարությամբ՝ Ա.Ա. Պանովի,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացություն՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները պարզաբանելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի հիման վրա։

I. Դիմումատուի հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմումատու, Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Միության դատարան, Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթները պարզաբանելու դիմումով:

Դիմումատուն նշում է, որ Հանձնաժողովի աշխատանքի պրակտիկայում առաջացել է մի հարց, որը կապված է «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 19 հավելված, այսուհետ՝ Արձանագրություն) 16-րդ կետով նախատեսված՝ ֆիզիկական անձանց նկատմամբ տուգանքներ նշանակելու մասին Հանձնաժողովի որոշումների դատական կարգով վիճարկման հետ:

Արձանագրության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցության ոլորտում Հանձնաժողովի ակտերը վիճարկվում են Միության դատարանում՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտով նախատեսված կարգով (Պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Դատարանի ստատուտ)՝ հաշվի առնելով Արձանագրության դրույթները: Միեւնույն ժամանակ, Դատարանի ստատուտի 39-րդ կետին համապատասխան, Պայմանագրի, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ (կամ) Միության մարմինների որոշումների կիրարկման հարցերի շուրջ ծագող վեճերի առնչությամբ Դատարան դիմելու իրավունքով օժտված են միայն Միության անդամ պետությունները եւ տնտեսավարող սուբյեկտները, որոնց դասվում են անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձինք կամ անդամ պետության, կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակով օժտված, այսուհետ՝ անհատ ձեռնարկատերեր):

Դատարանի ստատուտի դրույթներով ուղղակիորեն նախատեսված չէ, որ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկված այլ ֆիզիկական անձինք կարող են դիմել Դատարան, ինչը վկայում է Հանձնաժողովի ակտերի վիճարկման հարցում իրավական անորոշության մասին, խոչընդոտներ է ստեղծում խախտված իրավունքները եւ օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու իրավունքը նշված կատեգորիայի անձանց կողմից իրացվելու համար։

Ընդ որում, Հանձնաժողովը համարում է, որ Դատարանի ստատուտի 41-րդ կետի դրույթները, որոնք վերաբերվում են վեճի լուծման իրավասության առկայության վերաբերյալ հարցի առնչությամբ Դատարանի կարգավորմանը, թույլ են տալիս Դատարանին ապահովել Միության իրավունքի միատեսակ կիրառումն ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվել են անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար պատասխանատվության միջոցներ։

Դիմումատուն միեւնույն ժամանակ նշում է, որ Պայմանագրում ընդհանուր դրույթի առկայությունը այն մասին, որ մրցակցության ոլորտում Հանձնաժողովի ցանկացած ակտ, գործողություն (անգործություն) կարող է վիճարկվել Միության դատարանում Դատարանի ստատուտով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով Արձանագրության դրույթները (Արձանագրության 14-րդ կետի երկրորդ պարբերություն), ենթադրում է Պայմանագրում ամրագրելու ֆիզիկական անձանց կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար Հանձնաժողովի ակտերը, որոնցով վերջիններս ենթարկվել են պատասխանատվության Դատարանում վիճարկելու հնարավորության հարցը անդամ պետությունների կողմից քննարկելու անհրաժեշտությունը։

Ընդ որում, Հանձնաժողովը նշում է գործող իրավական կարգավորման շրջանակներում վերազգային եւ ազգային մակարդակով դատական մարմինների իրավազորությունների միանշանակ տարանջատումը, այդ թվում՝ Միության մարմինների որոշումների վիճարկման մասին դիմումների ուսումնասիրության

մասով Դատարանի բացառիկ իրավասության առկայության տեսանկյունից։ Դա հաշվի առնելով՝ անհրաժեշտ է նաեւ ամրագրել ֆիզիկական անձանց՝ իրենց շահերի դատական պաշտպանության իրավունքի իրացման երաշխիքները։

Հաշվի առնելով շարադրվածը՝ դիմումատուն Դատարանին խնդրում է տրամադրել խորհրդատվական եզրակացություն՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ոլորտում խախտումների համար ֆիզիկական անձանց պատասխանատվությունը սահմանող՝ Հանձնաժողովի ակտերի վիճարկման մասին նրանց դիմումների համաձայն վեճերի ուսումնասիրության մասով Դատարանի իրավասության առկայության առնչությամբ՝ Արձանագրության 14-րդ կետի, Դատարանի ստատուտի 39-րդ եւ 41-րդ կետերն իրենց համակարգային փոխկապակցվածությամբ պարզաբանելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված՝ Միության մարմինների համար արդարադատության մատչելիության իրավունքը եւ անձեռնմխելիությունը։

II. Դատարանի եզրահանգումները

Ղեկավարվելով Դատարանի ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան Պայմանագրի դրույթները պարզաբանում է դրանց համակարգային փոխկապակցվածությամբ՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, հաշվի առնելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն, պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ պայմանագրի առարկայի եւ նպատակների լույսի ներքո։

1. Պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ Միությունն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետությունների կողմից Պայմանագրին համապատասխան իրեն վերապահվող իրավասության շրջանակներում, այդ թվում՝ շուկայական տնտեսության եւ բարեխիղճ

մրցակցության սկզբունքների պահպանման հիման վրա։

Միության իրավասությունը սահմանելով՝ անդամ պետությունները Պայմանագրի մեջ ներառել են XVIII բաժինը, որում սահմանել են անդամ պետությունների տարածքներում հակամրցակցային գործողությունների, ինչպես նաեւ երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա բացասաբար ազդող գործողությունների հայտնաբերումն ու կանխումն ապահովող՝ Միությունում մրցակցության ընդհանուր սկզբունքներն ու կանոնները (Պայմանագրի 74-րդ հոդվածի 1-ին կետ)։

Պայմանագրի XVIII բաժնով սահմանված մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների պահպանման նպատակներով՝ Հանձնաժողովի՝ որպես Միության մշտապես գործող մարմիններից մեկը, իրավասությանն է վերապահված անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), ինչպես նաեւ անդամ պետությունների՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելու լիազորությունները, եթե այդպիսի խախտումներն ունեն կամ կարող են բացասական ազդեցություն ունենալ երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ բացառությամբ ֆինանսական շուկաների (Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետ)։

Այսպիսով, անդամ պետությունները համաձայնել են նշված ոլորտում վերոնշյալ անձանց պատասխանատվության ենթարկելու Միության իրավազորությանը եւ Հանձնաժողովի լիազորություններին։

2. Հանձնաժողովը, իրեն վերապահված իրավասության շրջանակներում իրականացնելով լիազորությունները, Արձանագրության 10-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթների ուժով, ընդունում է անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից կատարման համար պարտադիր

որոշումներ, այդ թվում՝

- Պայմանագրի XVIII բաժնով եւ Արձանագրությամբ նախատեսված դեպքերում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) նկատմամբ տուգանային պատժամիջոցներ կիրառելու մասին.

- մրցակցության ընդհանուր կանոնների խախտումը դադարեցնելուն, դրանց խախտման հետեւանքները վերացնելուն, մրցակցության ապահովմանն ուղղված գործողություններ կատարելու մասին։

Արձանագրության 10-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումները Միության իրավունքի կիրառման անհատական ակտեր են, որոնք հրապարակում են հանրային լիազորություններով օժտված վերազգային մարմինները եւ պարունակում են վերազգային հակամենաշնորհային հսկողության սուբյեկտների համար իրավական հետեւանքներ առաջացնող կամահայտություն՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց համար։

Բացի այդ՝ Արձանագրության 16-րդ կետում ամրագրված են իրավախախտումների կազմերը՝ դրանց կատարման համար տուգանային պատժամիջոցների նշմամբ։ Այն սուբյեկտների թվում, որոնց Հանձնաժողովը կարող է պատասխանատվության ենթարկել այդ ոլորտում իրավախախտում կատարելու համար, բացի իրավաբանական անձանցից եւ անհատ ձեռնարկատերերից, նշված են նաեւ ֆիզիկական անձինք։

3. Արձանագրության 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի՝ մրցակցության ոլորտի ակտերը Միության դատարանում վիճարկվում են Դատարանի ստատուտով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով Արձանագրության դրույթները։

Միեւնույն ժամանակ, Դատարանի ստատուտի 39-րդ կետով նախատեսված է, որ Դատարանն ուսումնասիրում է համապատասխան վեճերը, որոնք ծագում են Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ

(կամ) Միության մարմինների որոշումների կիրարկման հարցերի շուրջ, Միության անդամ պետության, ինչպես նաեւ տնտեսավարող սուբյեկտի դիմումի համաձայն։ Դրա հետ մեկտեղ, Դատարանի ստատուտում բացակայում է ուղղակի նշում առ այն, որ ֆիզիկական անձինք, որոնք օժտված չեն անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակով, իրավունք ունեն Հանձնաժողովի որոշումների վիճարկման մասին դիմումով դիմելու Դատարան։

4. Տնտեսավարող սուբյեկտ հասկացությունը՝ ըստ Դատարանի ստատուտի իմաստի, տարբերվում է տնտեսավարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) հասկացությունից՝ ըստ Արձանագրության իմաստի։

Ինչպես հետեւում է Դատարանի ստատուտի 39-րդ կետից, այն ներառում է իրավաբանական անձ, որը գրանցված է անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան, կամ ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր՝ անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան, բայց չի ներառում ֆիզիկական անձ, որի եկամուտ բերող մասնագիտական գործունեությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա է պետական գրանցման եւ (կամ) լիցենզավորման։

Ինչպես հետեւում է Արձանագրության 2-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված «տնտեսավարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ)» սահմանումից, տվյալ հասկացության մեջ է մտնում ինչպես առեւտրային կազմակերպությունը, ոչ առեւտրային կազմակերպությունը, որը զբաղվում է իրեն եկամուտ բերող գործունեությամբ, այնպես էլ ֆիզիկական անձանց երկու տեսակները՝ 1) անհատ ձեռնարկատեր, ինչպես նաեւ 2) ֆիզիկական անձ, որի եկամուտ բերող մասնագիտական գործունեությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա է պետական գրանցման եւ (կամ) լիցենզավորման։

Արձանագրության, ինչպես Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 118 որոշմամբ հաստատված՝ Մրցակցության ընդհանուր կանոնները խախտելու համար տուգանքների

հաշվարկման մեթոդիկայի եւ նշանակման կարգի դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտ (շուկայի սուբյեկտ) չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի եւ Արձանագրության իմաստով, կարող են ստորաբաժանվել երկու տեսակների։

Առաջին հերթին, դրանք պաշտոնատար անձինք են, որոնք, ինչպես տնտեսավարող սուբյեկտները (շուկայի սուբյեկտները), կարող են պատասխանատվության ենթարկվել Պայմանագրի 76-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման ցանկացած կազմով՝ գերիշխող դիրքի չարաշահում (Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետ), անբարեխիղճ մրցակցություն (Պայմանագրի 76-րդ հոդվածի 2-րդ կետ), հակամրցակցային համաձայնություններ (Պայմանագրի 76-րդ հոդվածի 3-5-րդ կետեր), տնտեսական գործունեության համակարգում (Պայմանագրի 76-րդ հոդվածի 6-րդ կետ)։

Երկրորդ հերթին, նրանք ֆիզիկական անձինք են, որոնք չեն դասվում ոչ տնտեսավարող սուբյեկտներին (շուկայի սուբյեկտներին), ոչ էլ պաշտոնատար անձանց շարքին։ Նրանք կարող են պատասխանատվության ենթարկվել միայն Պայմանագրի 76-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վեց կազմից մեկով՝ տնտեսական գործունեության համակարգման համար (Պայմանագրի 76-րդ հոդվածի 6-րդ կետ)։ Նման հնարավորությունն ուղղակիորեն մատնանշում են ինչպես Պայմանագրի 76-րդ հոդվածի 6-րդ կետի նորմերը, որոնք հասցեագրված են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտներին (շուկայի սուբյեկտներին), այլ նաեւ ոչ առեւտրային կազմակերպություններին ու ֆիզիկական անձանց, այնպես էլ Արձանագրության 16-րդ կետի 3-րդ ենթակետի նորմերը, որոնք սահմանում են խախտման տվյալ տեսակով տուգանքի առանձին չափը ֆիզիկական անձանց համար (20-ից 75 հազար ռուսական ռուբլի) եւ պաշտոնատար անձանց ու անհատ ձեռնարկատերերի համար (20-ից 150 հազար ռուսական ռուբլի)։ Այդ անձինք կարող են նաեւ պատասխանատվության ենթարկվել տեղեկությունները (տեղեկատվությունը) Հանձնաժողովի պահանջով իրեն չներկայացնելու կամ ժամանակին չներկայացնելու համար, կամ ակնհայտ ոչ հավաստի տեղեկություններ (տեղեկատվություն) Հանձնաժողով ներկայացնելու համար, կամ

Հանձնաժողովի այն որոշումները ժամանակին չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու համար, որոնք իրավախախտին պարտավորեցնում են կատարել որոշակի գործողություններ (Արձանագրության 16-րդ կետի 5-րդ եւ 6-րդ ենթակետեր)։

Շարադրվածով պայմանավորված՝ Արձանագրության եւ Դատարանի ստատուտի 39-րդ կետի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել ֆիզիկական անձանց չորս տեսակ, որոնք մրցակցության ընդհանուր կանոնների ոլորտում կարող են պատասխանատվության ենթարկվել՝

ա) Արձանագրության իմաստով տնտեսավարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ) հանդիսացող անհատ ձեռնարկատերեր,

բ) ֆիզիկական անձինք, որոնց եկամուտ բերող մասնագիտական գործունեությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա է պետական գրանցման եւ (կամ) լիցենզավորման ու որոնք Արձանագրության իմաստով տնտեսավարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ) են,

գ) պաշտոնատար անձինք,

դ) ֆիզիկական անձինք, որոնք չեն դասվում վերոնշյալ կատեգորիաներից որեւէ մեկի։

Դատարանի ստատուտի 39-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա՝ թվարկված կատեգորիաների շարքից միայն անհատ ձեռնարկատերերն ունեն Դատարան դիմելու իրավունք։

Այսպիսով, Հանձնաժողովն օժտված է անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների խախտումներ հաստատվելու դեպքում ֆիզիկական անձանց նկատմամբ տուգանք նշանակելու իրավասությամբ։ Ընդ որում, Դատարանի ստատուտով նախատեսված չէ Արձանագրության 14-րդ կետին համապատասխանող նորմը ֆիզիկական անձանց

դիմումներով Հանձնաժողովի ակտերի վիճարկման գործերը քննելու Դատարանի իրավասության մասին։

5. Պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ Միության գործունեությունը հիմնված է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների եւ նորմերի, ինչպես նաեւ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների գերակայության սկզբունքն անվերապահորեն պահպանելու անհրաժեշտության վրա (Պայմանագրի նախաբան)։

Դատական պաշտպանության իրավունքի տարրը՝ վարչական պատիժներ նշանակելու մասին վարչական մարմինների որոշումների, որոնց թվին են դասվում նաեւ պատասխանատվության միջոցներ նշանակելու մասին Հանձնաժողովի ակտերը, դատական կարգով վերանայման երաշխիքն է։ Ընդ որում, դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք՝ իր իրավունքները եւ պարտականությունները սահմանելիս, ունի իրավասու դատարանի կողմից իր գործերի քննման իրավունք։

Պայմանավորված նրանով, որ Հանձնաժողովն իր որոշումներով պատասխանատվության է ենթարկում նաեւ ֆիզիկական անձանց, որոնք օժտված չեն անհատ ձեռնարկատերերի կարգավիճակով, ինչը հանգեցնում է այդ անձանց իրավունքների եւ պարտականությունների փոփոխմանը, վերջիններս չեն կարող զրկվել վերոնշյալ երաշխիքներից, որոնք ուղղված են բացառապես դատական կարգով նրանց իրավունքների եւ պարտականությունների հավասարակշռության վերջնական սահմանմանը։

Միության դատարանի՝ Միության անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին գործերի քննության իրավասության հատուկ բնույթը սահմանված է Դատարանի ստատուտի 39-րդ կետով եւ Արձանագրության 14-րդ կետով։ Այսպիսով, Արձանագրության 16-րդ կետով նախատեսված տուգանքների նշանակման մասին Հանձնաժողովի որոշումները վիճարկելու մասին գործերով Դատարանի առարկայական իրավասությունը սահմանված է Միության իրավունքի նորմերով։ Միեւնույն ժամանակ, այդ պահանջների քննության Դատարանի սուբյեկտային

իրավասությունը, այդ պահանջներն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ներկայացնելու դեպքում, Միության իրավունքի նորմերով նախատեսված չէ։ Դա վկայում է իրավունքի այնպիսի տարրի չապահովման հետեւանքով, ինչպիսին իրավունքի նորմերի հիման վրա իրավասության սահմանումն է՝ նշված անձանց արդար դատական քննության իրավունքների իրացման իրավական երաշխիքների բացակայության մասին եւ տարբեր կատեգորիաների ֆիզիկական անձանց իրավունքների ու պարտականությունների անհավասարության մասին, որոնք կարող են պատասխանատվության ենթարկվել։

6. Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն եւ գործառութային անձեռնմխելիություն (Պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ կետ), մարմինների սեփական համակարգով, որոնց դասվում է նաեւ Հանձնաժողովը՝ որպես Միության մշտապես գործող կարգավորող մարմին (Պայմանագրի 18-րդ հոդվածի 1-ին կետ)։

7. Որոշակի վեճի լուծման մասով Դատարանի իրավասության՝ ներառյալ ratione personae իրավասության, առկայության հարցը, որոշում է հենց Դատարանը՝ Դատարանի ստատուտի 41-րդ կետի համաձայն։ Ընդ որում, Դատարանն առաջնորդվում է Պայմանագրով, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով եւ (կամ) երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով։

Վերոնշյալից հետեւում է, որ Դատարանը որոշակի դիմումի ընդունելիության հարցը լուծելու շրջանակներում պարզում է, արդյո՞ք Դատարանի ստատուտի 39-րդ կետի իմաստով դիմումատուն տնտեսավարող սուբյեկտ է եւ արդյո՞ք Հանձնաժողովի՝ վիճարկվող որոշմամբ շոշափվել են տնտեսավարող սուբյեկտի իրավունքները եւ օրինական շահերը։ Սակայն դա չի ենթադրում Դատարանի՝ իր իրավասությունը (այդ թվում՝ սուբյեկտային իրավասությունը) ընդլայնելու (նեղացնելու) իրավունք։ Դա նաեւ մատնացույց է անում Պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետի նորմը, համաձայն որի, Միության մարմինները գործում են այն լիազորությունների շրջանակներում, որոնք նրանց վերապահված են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող

միջազգային պայմանագրերով։

Պայմանագրով՝ Դատարան դիմելու իրավունքով չօժտված դիմումատուների մասնակցությամբ վեճերի կարգավորումը Դատարանի իրավասությանը վերապահելը Միության անդամ պետությունների արտոնությունն է համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային իրավական այն մոտեցման համաձայն, որ միջազգային դատարանին իրավասությամբ օժտելը հիմնվում է պետությունների համաձայնության վրա, ինչը բխում է Դատարանի ստատուտի 40-րդ կետից։

Շարադրվածի հիման վրա, ֆիզիկական անձանց մասնակցությամբ գործերի քննության իրավասությամբ Դատարանին օժտելը նա չի կարող իրականացնել ինքնուրույն։ Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ ներկայումս նախատեսված չէ Հանձնաժողովի՝ մրցակցության ոլորտի այն ակտերը վիճարկելիս ֆիզիկական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը, որոնք շոշափել են Միության իրավունքով իրենց տրամադրված իրավունքները եւ օրինական շահերը։

8. Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան ներկայացնում է հետեւյալ պարզաբանումը.

8.1. Միության իրավունքով Դատարանն օժտված է անդրսահմանային շուկաներում մրցակցության ոլորտում խախտումների համար պատասխանատվություն սահմանող՝ Հանձնաժողովի որոշումների վիճարկման մասին գործերի քննության իրավասությամբ, միայն այն ֆիզիկական անձանց դիմումների համաձայն, որոնք, անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան, գրանցված են որպես անհատ ձեռնարկատեր։ Այլ ֆիզիկական անձանց դիմումների համաձայն՝ Դատարանի կողմից վեճերի ուսումնասիրություն Դատարանի ստատուտով նախատեսված չէ։

8.2. Միության անդամ պետությունները կարող են Դատարանի իրավասության փոփոխություն իրականացնել Պայմանագրի 115-րդ հոդվածի հիման վրա՝ Դատարանի ստատուտի մեջ համապատասխան ուղղումներ կատարելու միջոցով։

III. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմումատուին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝	Ա.Ա. Դրոնով
Դատավորներ՝	Ա.Մ. Աժիբրաիմովա
	Է.Վ. Հայրիյան
	Դ.Պ. Ալեքսանդրով
	Ա.Ա. Զաբարա
	Ե.Ժ. Իսմայիլով
	Մ.Տ. Կայիպով
	Ա.Բ. Կիշկեմբաեւ
	Ն.Վ. Պավլովա
	Ա.Գ. Թունյան